

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.197>

Making Sense of the RA Security Environment Within the Context of the Geopolitical Realities of the South Caucasus

Eduard Zohrabyan

<https://orcid.org/0009-0006-6983-0100>

Head of YSU Chair of History of Armenia's Neighboring Countries, Associate Professor

eduardzohrabyan@ysu.am,

Davit Apinyan

<https://orcid.org/0009-0009-4704-2615>

Assistant at YSU Chair of History of Armenia's Neighboring Countries

davitapinyan@gmail.com

Keywords: geopolitics, Republic of Armenia, Turkey, Azerbaijan, Georgia, Iran, Russian Federation, South Caucasus, ally, region, relations, contradictions, enemy.

In modern times, in particular, after the 44-day terrorist war unleashed by the Azerbaijani side against the Republic of Artsakh in September 2020, the complex military-political shifts and rearrangements taking place in the South Caucasus, and the Genocide of the Armenians of Artsakh on September 19, 2023, have created serious threats not only to the security and sustainable developments of the Republic of Armenia, but also to the entire region. Scientific research on the fundamental issue goes beyond the scope of purely theoretical interests: it has contemporary practical-political, strategic significance.

The article provides an interpretation and critical analysis of the present and the main expectations of the security environment of the RA within the context of new geopolitical realignments and dominant interests and activities of geopolitically interested parties.

ՀՀ անվտանգային միջավայրի իմաստավորումը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրողությունների խորապատկերում

Էդուարդ Չոհրաբյան

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 197-207



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received:12.06.2024

Revised: 17.07.2024

Accepted: 31.08.2024

© The Author(s) 2024

**ՀՀ անվտանգային միջավայրի իմաստավորումը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական
իրողությունների խորապատկերում**

ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, դոցենտ

Դավիթ Ափինյան

ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասիստենտ

Հիմնաբառեր՝ աշխարհաքաղաքականություն, Հայաստանի
Հանրապետություն, Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան,
Իրան, Ռուսաստանի Դաշնություն, Հարավային Կովկաս,
դաշնակից, տարածաշրջան, փոխհարաբերություններ,
հակասություններ, թշնամի:

Արդի ժամանակներում, մասնավորաբար, 2020 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծած ահաբեկչական 44-օրյա պատերազմից հետո, Հարավային Կովկասում ընթացող ռազմաքաղաքական բազմաբարդ տեղաշարժերն ու վերադասավորումները, 2023 թվականի սեպտեմբերի 19-ին արցախահայության ցեղասպանությունը լուրջ սպառնալիքներ են ստեղծել ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև ամբողջ տարածաշրջանի անվտանգության և անցնցում զարգացումների համար: Հիմնահարցի գիտական հետազոտությունը դուրս է գուտ գիտատեսական հետաքրքրությունների շրջանակից. այն ունի արդիական գործնական-քաղաքական, ռազմավարական նշանակություն:

Հոդվածում՝ աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների համատեքստում, իմաստավորվում և քննական վերլուծությամբ ներկայացվում են աշխարհաքաղաքական շահագրգիռ ուժերի դրմինանտ շահերով և գործունեությամբ պայմանավորված ՀՀ անվտանգային միջավայրի ներկյան ու հիմնական սպասելիքները:

Осмысление ситуации безопасности РА в контексте геополитических реалий Южного Кавказа

Эдуард Зограбян

Заведующий кафедрой истории сопредельных с Арменией стран ЕГУ, доцент

Давид Апинян

Ассистент кафедры истории сопредельных с Арменией стран ЕГУ

Ключевые слова: геополитика, Республика Армения, Турция, Азербайджан, Грузия, Иран, Российская Федерация, Южный Кавказ, союзник, регион, отношения, противоречия, враг.

В последнее время, в частности, после 44-дневной террористической войны, развязанной Азербайджаном против Республики Арцах в сентябре 2020 года, после сложных военно-политических сдвигов и перестановок на Южном Кавказе, после геноцида арцахских армян 19 сентября, в 2023 году оно создало серьезные опасности не только для Республики Армения, но и для общей региональной безопасности и развития транзита. Научные исследования фонда выходят за рамки простых научных интересов: все это имеет современное практическое, политическое и стратегическое значение.

В контексте новых геополитических перестановок в статье интерпретируются и подвергаются анализу нынешние и основные ожидания касательно среды безопасности Армении, обусловленные доминирующими интересами и деятельностью геополитически заинтересованных сил.

* * *

Ներածություն: Հոդվածի նպատակն է քննական վերլուծությամբ բացահայտել և ներկայացնել աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նոր իրողությունների պայմաններում Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղացող երկրների ռազմաքաղաքական շահերն ու մոտեցումները ՀՀ-ի անվտանգային խնդիրների համատեքստում:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասը շարունակում է պահպանել բարդ աշխարհաքաղաքական զարգացումների ամենադինամիկ տարածաշրջաններից մեկի կարգավիճակը, որտեղ միահյուսվում են տարբեր պետությունների այդ թվում՝ ՌԴ, ԱՄՆ, ԻԻՀ, ԹՀ, և դերակատարների՝ Եվրամիություն, ՆԱՏՕ, ՀԱՊԿ և այլ շահերը: Աշխարհաքաղաքական սուբյեկտների հաճախ նաև իրարամերժ գործունեության հետևանքով Հարավային Կովկասում ձևավորված բարդ իրավիճակը ՀՀ անվտանգային միջավայրի ապահովման առումով պահանջում է նոր իրողություններին ադապտացվող ռազմավարությունների ներդրում:

Հասարակության և պետության կենսապահովման ավանդական միջավայրի փոփոխման պայմաններում Հարավային Կովկասում իրագործվում են այդ թվում՝ աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, մշակութային, գաղափարական նորանոր վերաձևումներ:

Գործընթացների սկզբնապատճառներն ու հետևանքներն բավականին խորքային են և դրանց իմաստավորումներն ու լուսաբանումը սույն հոդվածում առավել նպատակահարմար է ներկայացնել թեզիսների տեսքով:

Հոդվածը հեղինակվել է ռազմավարական գործընթացների վրա էական նշանակություն ունեցող, իրողությունների պատճառահետևանքային կապի վերհանման և կանխատեսման ֆորսայտ տեսության մեթոդաբանության կիրառմամբ: Հոդվածի նորույթն այն է, որ համապարփակ՝ պատմաքաղաքագիտական դիտանկյունով քննական վերլուծության է ենթարկվում տարածաշրջանի աշխարհաքաղաքական համատեքստը՝ մտասևեռվելով դրանում ՀՀ-ի համար ստեղծված իրավիճակի անվտանգային հիմնախնդիրներին:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. լուսաբանել Հարավային Կովկասում ռազմաքաղաքական տեղաշարժերի նոր իրողությունները մինչև 2020 թ, Ադրբեյջանի ահաբեկչական պատերազմը Արցախի հանրապետության դեմ
2. բացահայտել ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունը տարածաշրջանում խաղացողների ռազմավարության և մարտավարության նոր միտումների վրա

«Հանվտանգային միջավայրի իմաստավորումը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրողությունների խորապատկերում»

3. ցույց տալ ՌԴ-Թուրքիա մերձեցման նոր պատմափուլի հետևանքները ՀՀ անվտանգային իրավիճակի առումով
4. վեր հանել ՀՀ անվտանգության խնդիրները հավաքական Արևմուտքի կողմից ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու քաղաքականության ետնախորքի վրա
5. հատկազօծել Իրան-ՀՀ հարաբերությունների նշանակությունը տարածաշրջանի անվտանգային նոր ճարտարապետության ձևավորման գործում:

Գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում Անգլոսաքսական աշխարհառազմավարությունում գերակա խնդիրներից է մինիմալացնել և չեզոքացնել Ռուսաստանի ռազմաքաղաքական նշանակությունը, տեսականորեն այն մասնատել առնվազն երեք պատմաաշխարհագրական միավորի, ինչպես նաև տարբեր մեխանիզմներով տիրանալ ցանկացած պետության ինքնուրույն լինելիության հիմք հանդիսացող՝ ռազմավարական նշանակության ռեսուրսներին: Այլ խոսքով, աշխարհաքաղաքական մրցակցությունը, որի մասին նախանշվում էր տակավին արդի աշխարհակարգի մեկնարկը տված Վեսթվայյան համակարգում, այլևս կրում է առավել առարկայական և բացահայտ բնույթ: Աշխարհաքաղաքական մրցակցություն-պատերազմ-ռազմատեխնոլոգիական և հաստատորթենական նորարարություններ-ծախսերի ավելացում-Հասնրային ռեսուրսների արդյունավետ արդյունահանման աճող պահանջարկ-նոր տեսակի մաքսեր, հարկեր և հանրային ֆինանսներ-բնութկրատացում-մերիտոկրատական համակարգի ներդրում- պետական կառավարման կենտրոնացում և ռացիոնալացում-հարկադրանքի միջոցների պետական մենաշնորհում-արդի ինքնիշխանություն [Եփրեմյան Տ., Արդի աշխարհակարգի մեկնարկը, Վեստֆայյան համակարգը, Երևան, 2023]:

Այս համատեքստում, որպես մերձակա առաջնայնություն, կարևորվում է ՌԴ-ն Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներին ածխաջրածինների հիմնական մատակարարից վերջնականապես «անջատելու» խնդիրը: Վերջինով հարուցվելու է ֆինանսական խոր ճգնաժամ, ինչն ուղղակի ներգործություն կունենա ՌԴ-ի՝ համաաշխարհային ռազմական գերտերության կարգավիճակի վրա:

ԱՄՆ ռազմավարական դիսկուրսում պարբերաբար սպրդվում է այն տեսակետը, որ նույնիսկ թուլացած, սակայն միասնական Կուսաստանը շարունակելու է մնալ ԱՄՆ թիվ մեկ ռազմավարական հակառակորդը:

Որպես պարզաբանում՝ պետք է նշել, որ ԱՄՆ կողմից թիվ մեկ «գիսացավանք» հայտարարված Չինաստանն, անգամ իր համաաշխարհային գերտերունական նկրտումներով չի տիրապետում նման կարգավիճակ ունեցող երկրի՝ համաաշխարհային առևտրային հաղորդուղիների լիակատար վերահսկման, ինչպես նաև էներգահումքային ու կրիտիկական ռազմավարական նշանակության նյութահումքային ռեսուրսների ամբողջությունը:

Հարկ է նշել նաև, որ ՉԺՀ ռեսուրսներն ինքնապահովման համար բավարար են, սակայն համաաշխարհային թիվ 1 գլոբալ գերտերություն լինելու և ԱՄՆ-ին ու անգլոսաքսական աշխարհին

առաջնային դիրքերից հետ գցելու առումով անբավարար են, ինչը ՉԺՀ-ին պարտադրում է վարել առավել զգուշավոր և զուսպ ռազմաքաղաքական կուրս:

Որպես ՌԴ տնտեսական հնարավորությունների սահմանափակման և արգելափակման ձևաչափ՝ ի շարս այլնի, դեռևս 20-րդ դարի վերջին տասնամյակից ընտրված է էներգահումքային ռեսուրսների արտահանումը ՌԴ տարածքով հնարավորինս սահմանափակելու, իսկ հետագայում նաև բացառելու և այդ գործընթացը սեփական ձեռքերում պահելու անգլոսաքսական մարտավարությունը:

Վերոհիշյալ նախագծերը, այդ թվում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (*նավթատար*), Բաքու-Թբիլիսի-Էրզրում (*գազատար, նույն ինքը՝ Հարավային գազատրանսպորտային միջանցքը*, Բաքու-Սուփսա (*նավթատար*), Բաքու-Թբիլիսի-Կարս (*երկաթուղի*), Բաքու-Թուրքմենբաշի և Բաքու-Ակտաու (*մարդա-բեռնատար և բեռնատար անդրկասպյան լաստանավային հաղորդակցություն*)՝ ի թիվս այլնի, կոչված են նաև տնտեսապես ապահովագրելու Հարավային Կովկասի, կասպյան և միջինասիական տարածաշրջաններն իրենց նախկին պրոտեկտոր Ռուսաստանից և միաժամանակ կաշկանդելու Չինաստանի աշխարհաքաղաքական ընդարձակումը դեպի նշյալ էներգահումքառատ շրջաններ:

Հարկ է ընդգծել այն կանխադրույթը, որ ցանկացած տեսակի գերտերության (*համաշխարհային, տարածաշրջանային, տնտեսական, ռազմական և այլն*) լինելիության անկյունաքարերից է՝ անդադար էքսպանսիան (*աշխարհաքաղաքական, աշխարհագրական, մշակութային, ռազմական, ռազմաքաղաքական, տեխնոլոգիական, տնտեսական և այլն*), առանց որի ակնհայտ է դառնում գերտերունական միավորի ընդարձակման դինամիկայի կորուստը՝ հաջորդող իներցիոն շարժի, լճացման և դադարի շրջափուլերով:

Խորհրդային Միության լուծարումից հետո վերջինի՝ Արևելյան Եվրոպայում սփռվող ազդեցության տիրույթներն արագորեն յուրացվեցին անգլոսաքսական աշխարհաքաղաքական ինստիտուցիոնալ միավորումների կողմից, իսկ կարճաժամանակ կտրվածքում այդ էքսպանսիան թափանցեց նաև նախկին ԽՍՀՄ տարածք: Յուրացվեցին մերձբալթյան երկրները, ինչպես նաև սոցիալ-քաղաքական տեխնոլոգիաների կիրառմամբ հաջողվեց Արևմուտքի գլխավոր ախտյանից, մասամբ, օտարել նաև Հարավային Կովկասը և Կենտրոնական Ասիան: Հարավային Կովկասում այսօր էլ ծավալվող գործընթացները այդ նույն աշխարհաքաղաքականության հստակ դրսևորումներն են, որոնք հնարավոր չէ դիտարկել առանց այլ տարածաշրջաններում ուժերի վերադասավորումների: Վերջիններիս է միտված նաև ռուս-ուկրաինական եղբայրասպան տևական պատերազմը: Ուկրաինական պատերազմը համակողմանի փորձաքար է հակամարտող կողմերի՝ հավաքական Եվրոպայի և ՌԴ տազմավարական նպատակների բացահայտման տեսանկյունից: ներկայումս Հարավային Կովկասում տերությունների մրցակցությունը և թեչ պայքարը թևակոխել է մի նոր շրջափուլ, որտեղ առանցքայինը տակավին մնում է ոչ միայն ռեսուրսների և հաղորդակցություն ուղիների նկատմամբ վերահսկողության հաստատման անզիջում պայքարը, այլև քաղաքական ազդեցության և ներկայության ապահովման հանգամանքը: Մասնավորապես, Արցախի Հանրապետության դեմ 44 օրյա ահաբեկչական պատերազմից հետո, որը սանձազերծվեց Ադրբեջանի կողմից, Թուրքիայի հովանավորությամբ և անմիջական ռազմական մասնակցությամբ, հանգուցալուծվեց արցախահայության ցեղասպանությամբ 2023 թ. սեպտեմբերի 19-ին, ցույց տվեց, որ տերությունները հանուն իրենց

«Հանվտանգային միջավայրի իմաստավորումը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրողությունների խորապատկերում»

սեփական շահերին հեռահար նպատակների աշխարհաքաղաքական վերադասավորումների պայմաններում պատրաստ էին ոչ միայն գործելու բազմակի ստանդարտներով, շրջանցելով հաճախ իրենց իսկ կողմից բազմիցս հայտարարած հանրահռչակ հիմնարար մարդու իրավունքների, ազգերի ինքնորոշման սկզբունքները, այլև գոհաբերելու առանձին ժողովուրդների: Ադրբեջանը ոգևորվելով «հաղթանակից» ոչ միայն օկուպացրել է ՀՀ սուվերեն տարածքի մի հատվածը, այլև սպառնալիք է ստեղծել ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև պայթունավտանգ իրավիճակ է ձևավորել ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ Մերձավոր Արևելքի անվտանգության տեսանկյունից:

Արևմուտքի դեպի ՌԴ գրոհի ներկայիս բարձրակետն է Մոսկվայի կողմից սեփական համարվող Ուկրաինայի օտարումը ռուս-սլավոնական քաղաքակրթությունից, ինչպես նաև այդ երկրների հետագա թշնամացումը:

Հակառուսականության պայքարի համատեքստում է նաև ՌԴ-ից Կենտրոնական Ասիայի օտարման գործընթացը, որի գաղափարամշակութային ապահովման կարևոր գործիքակազմերից է իսլամական և թյուրքական համերաշխության քարոզը:

Վերջինում առանձնահատուկ դերակատարում է տրված ԹՀ-ին, որն այն կիրառում է երկու հիմնական՝ ազգային և վերազգային հարթություններում:

Որքան էլ ցավալի է խոստովանել, սակայն փաստ է, որ ԹՀ-ն բացառիկ երկրներից է, որն ունի սեփական արտաքին քաղաքականության գաղափարայնացված տեսլական: Այն հիմնականում բխում է երեք խորքային բաղադրատարրերից (*թուրքիզմ*, *օղուզականություն* և *պանթուրանիզմ*) և Թուրքիայի ազգային դոկտրինից, որի իրագործումը մահացու վտանգ է ՀՀ պետականության և հայ ազգի համար ընդհանրապես:

Այս մտասևեռումները մասամբ արդիականացվեցին ներկայումս ընդդիմադիր ձևացող ԹՀ նախկին արտգործնախարար Ա.Դավութջյանի հեղինակած և 2001թ. հրատարակված «Ռազմավարական խորություն. Թուրքիայի միջազգային դիրքը» աշխատությունում (Davutoğlu, A. Stratejik Derinlik. Türkiyenin Uluslararası Konumu. 2001) կոնցեպտուալ աշխատության միջոցով, որում ի թիվս այլնի, արձարծված է «զրո խնդիր հարևանների հետ» տեսահայեցակարգային մոտեցումը: Բովանդակային առումով դարձյալ քողարկված լուրջ վտանգներ է պարունակում ինչպես ողջ տարածաշրջանի գործող ճարտարապետության, այդպես էլ ՀՀ անվտանգության իմաստներով:

Այն, որ ԹՀ աշխարհաքաղաքական և ռազմաստրատեգիական ընդարձակման գործընթացներում փաստացի ինքնուրույն Հայաստանի Հանրապետությունը տեղ չունի, ակնհայտ է և անառարկելի: Դրա օգտին են խոսում նաև նրա կողմից ՀՀ ուղղությամբ կիրառվող տեղեկատվական, ռազմական, տնտեսական, այդ թվում նաև պրոքսի գործիքակազմերը, որոնք իրենց հերթին էքզիստենցիալ վնասում և թուլացնում են հայկական պետականությունը:

Հարավային Կովկասի անկախ հանրապետությունների հռչակումից հետո Թուրքիայի ռազմավարական գերնպատակի՝ այն է պանթուրքիզմի գաղափարի կենսակոչման համար նոր հեռանկարներ բացվեցին: Նաև այդ առումով Թուրքիայի ռազմաքաղաքական հաշվարկներում

առավել կարևոր տեղ էր զբաղեցնում Ադրբեջանը: Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները կայուն և դինամիկ զարգացում ապրեցին Ադրբեջանի ժողովրդական ճակատի առաջնորդ, ընդգծված պրոթուրքական քաղաքականության համոզմունքներ ունեցող Ա. Էլչիբեյի նախագահության շրջանում: Ադրբեջանը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ առանձնակի տեղ սկսեց զբաղեցնել՝ խարսխվելով «լեզվի, կրոնի, մշակույթի միասնության վրա» [Մելքոնյան Բ., 2024]: Թուրքիայի նման դիրքորոշումից հետո օգտվեց Արցախյան առաջին պատերազմում պարտված Ադրբեջանը, որը «ռազմական ոլորտում համագործակցելով Թուրքիայի հետ լուծեց մի շարք խնդիրներ, նախնառաջ կրճատեց ռուսական ռազմական ազդեցությունը՝ միաժամանակ Արցախյան հիմնախնդրում և ռազմատեխնիկական ոլորտում ձեռքբերելով վստահելի գործընկեր և դաշնակից» [Մինասյան, 2023, 23]:

Թուրքիայի պարագայում հետևությունը միանշանակ է՝ այդ պետությունը եղել է կա ու շարունակելու է լինել Հայաստանի Հանրապետության հիմնական թշնամիներից՝ պատրաստ պատեհ ժամին սեփական կամ պրոքսի միջոցներով (*Ադրբեջանի ձեռքով, կամ նրա հետ համատեղ*) ուղղակի կամ անուղղակի հարվածելու Հայաստանին:

ՀՀ հանդեպ ԹՀ կողմից տարվող թշնամական քաղաքականության օրինակ կարելի է նշել նաև Ախուրյանի ջրամբարը սնող Կարս, Կարախան գետերի վրա կառուցված բազմաթիվ մանր ամբարտակները, ինչի հետևանքով ջրամբարը չի համարվում անհրաժեշտ ծավալի ջրերով և զգալի վնաս է պատճառվում Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի մարզերի գյուղատնտեսությանը:

Ներկայի ամենավտանգավոր դրսևորումներից է նաև ՀՀ հետ ԹՀ իբրև Բարիդրացիական հարաբերությունների հաստատման նախագիծը, որի կենսակոչման մեջ ակնհայտորեն նշմարվում են սողացող տնտեսական, ռազմահարկադրական և այլ էքսպանսիոնիստական տարրեր, այդ թվում՝ Հայոց պահանջատիրության գաղափարական չեզոքացումը, որը հանգեցնելու է ազգային դեգրադացիայի:

Խնդիրը կրկնակի է բարդանում նաև նրանով, որ փաստաթղթավորված ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնությունը Ադրբեջանին ընտրել է, որպես Հարավային Կովկասում իր աշխարհաքաղաքական ազդեցության ամրապնդման և պատժամիջոցների շրջանցման հենակետերից մեկը, որի համատեքստում էլ թուրք-ադրբեջանական վտանգի առջև պաշտոնական Երևանին թողել է գրեթե միայնակ: Հայաստանի շուրջ այս մերժելի իրավիճակի ձևավորումը տեղի էր ունեցել աստիճանաբար, առարկայական և ենթակայական մի շարք գործոնների ազդեցությամբ, որի մասին ակամայից խոստովանում է ՌԴ ռազմավարական գործընկեր, Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը 2020 թ. հուլիսի 29-ի հայտարարությամբ. «Հայաստանը մեկուսացված է տարածաշրջանային բոլոր նախագծերից: Մենք նրանց մեկուսացրել ենք: Նայեք մեր տարածաշրջանի էներգետիկ, տրանսպորտային և հեռահաղորդակցային նոր քարտեզներին: Հայաստանը չկա դրանցում»: Մեկ այլ առիթով նա հայտարարում էր. «Մեր քաղաքականությունն էր՝ տնտեսապես քայքայել, փլուզել և մեկուսացնել Հայաստանը: Ես դա երբեք չեմ թաքցրել...» [Տոնոյան Ա., 2024]:

Մյուս կողմից էլ ՌԴ համար շարունակում է առավել լուրջ աշխարհաքաղաքական արժեք ներկայացնել Ադրբեջանը, քան իր ռազմավարական դաշնակից Հայաստանը, ինչը ձեռքերի լրացուցիչ ազատություն և ոգևորություն է հաղորդել Բաքվի ռազմաքաղաքական ղեկավարությանը: Օրինակ 2014թ. Դրիմի վերամիավորումից հետո ռուսական գազի ուղիղ առքի

«Հանված գազի միջավայրի իմաստավորումը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրողությունների խորապատկերում»

սահմանափակման ֆոնին ՌԴ-ն փորձում է մասամբ այն շրջանցել նաև ԱՀ միջոցով: Չի բացառվում, որ այդ նպատակով է, որ հաջորդող 2015թ. սեպտեմբերի 11-ին ռուսական «Գազպրոմ էքսպորտ» և «Ադրբեջանական մեթանոլային ընկերություն» (AzMeCo)-ի միջև ստորագրվեց գազի առուվաճառքի պայմանագիր, որով Մոսկվան պարտավորվեց Բաքվին վաճառել տարեկան շուրջ 2 մլրդ. մ³ գազ իբրև որպես էթանոլի արտադրության հումք [«Газпром» подписал договор на поставку газа в Азербайджан]:

Հարկ է նշել, որ բարձր գազաֆիկացման աստիճան ունեցող Հայաստանի Հանրապետությունը տարեկան սպառում է շուրջ 2 մլրդ. մ³ գազ և նմանատիպ ծավալների սպառումը միջինից ցածր արտադրական հզորություններ ունեցող ձեռնարկության համար իրատեսական չեն:

Այստեղ հետևությունը մեկն է՝ ՌԴ-ն գազի վաճառքի սահմանափակումները մասամբ շրջանցում է ԱՀ տարածքով՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի միջոցով:

Կարելի նշել նաև Բաքու-Տիխոնեցկ նավթախողովակով՝ ռեքսային տարբերակով, շուրջ 4 մլն. տոննա ռուսական նավթ ԱՀ տարածքով արտահանելու գործընթացը [Россия и Азербайджан обсудили расширение нефтепровода]: Դեռ ավելին՝ ռուսական ԼՈՒԿՕՅԼ ընկերությունն ադրբեջանական «Շահ Դենիզ» գազահանքում ունեցած 10% մասնաբաժնին գումարել է 2022թ. 1,45 մլրդ. դոլարով մալազիական «Պեթրոնաս» ընկերությունից ձեռք բերած 9,99% բաժնեմասը՝ վերածվելով «Շահ Դենիզի» բրիտանական «Բրիթիշ Կեթրոլիումից» հետո թվով 2-րդ մասնատիրոջ [«Лукойл» закрыл сделку по покупке у Petronas доли в проекте Шах-Дениз]: Այս համատեքստում կարևոր է նաև Ղազվին-Ռաշտ-Աստարա՝ ԻԻՀ-ն ԱՀ և ՌԴ-ն միմյանց կապող «Հյուսիս-հարավ» միջանցքի երկաթուղային նախագծի Ռաշտ-Աստարա հատվածի ռուսական կապիտալի մասնակցությամբ կառուցումը, որի վերաբերյալ պայմանագիրը ստորագրել է 2023թ. մայիսի 17-ին [Россия и Иран договорились о строительстве железной дороги для развития международного транспортного коридора «Север – Юг»]:

Այսուհանդերձ, «Հյուսիս-հարավը» ՀՀ տարածքով նաև իրագործելու տեղեկատվական աղմուկը շարունակելու է գոյատևել որպես այդպիսին և տեսանելի ապագայում իրականություն չի դառնալու:

Վերոգրյալն ընդամենը մի քանի դրվագներ էին, որոնք ուղղակիորեն ապացուցում են ԱՀ աշխարհաքաղաքական նշանակությունը ՌԴ համար՝ ի տարբերություն Հայաստանի:

Պետք է ընդգծել, որ ռուս-ադրբեջանական փոխհարաբերությունները միաժամանակ փխրուն են և լի են անկայունանալու ներուժով, որի թվին են պատկանում ՌԴ խաղաղապահների ներկայությունը հայաթափված Արցախում, ԱՀ հնարավոր լիարժեք միակողմանի թրքամետ քաղաքականությունը, Ադրբեջանում գործող արևմտյան անդրազգային նավթագազային կորպորացիաների՝ հաճախ հակառուսականությամբ աչքի ընկնող գործունեությունը, ԱՀ-ում մեծ արագությամբ աճող թրքամետությունը, այդ ֆոնին ՌԴ ներկայությունը կաշկանդելու միտումները, ԱՀ տարածքը ամերիկյան, իսրայելական, թուրքական և հակաիրանական պլացդարմի վերածումը, ազգային փոքրամասնությունների խնդիրը և այլն:

Այսուհանդերձ, ԱՀ-ն տեսանելի ապագայում հակահայկական ձեռնարկումներում շարունակելու է ստանալ Թուրքիայի անվերապահ և բազմաձևաչափ աջակցությունը, որի ռազմական բաղադրյալն այսպես կոչված «Շուշիի հոչակագրով» հասցվել է ռազմավարական փոխօգնության մակարդակի՝ ինքնին վերածվելով հակաադրբեջանական ուղղությամբ հայկական ՋՈւ միայնակ լայնամասշտաբ կիրառումը կաշկանդող գործոնի:

ԱՀ-ն իր նմանատիպ ձեռնարկումներում կշարունակի մասնակի աջակցություն ստանալ Իսրայելից, Պակիստանից, Մեծ Բրիտանիայից և այլ երկրներից:

Ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ ԱՀ-ն Հայաստանի հետ հարաբերություններում խաղաղ նպատակներ չի հետապնդում և հայկական կողմի խաղաղամտությունն ու պատերազմում ունեցած ժամանակավոր անհաջողությունը ծառայեցնում է իր առկա և հեռանկարային մարտավարա-ռազմավարական նշանակության խնդիրների կենսագործմանը, որոնց թվում են՝ ՀՀ-ի որպես ռազմական, տնտեսական, տեխնոլոգիական, տարածաշրջանում փոքրիշատե որոշիչ քաղաքական ու տարածքային միավորի մինիմալացումն ու չեզոքացումը:

Միաժամանակ պետք է նշել, որ ԱՀ-ն բարձր տեմպերով վերածվում է տարածաշրջանում թուրքական պրոքսիի: Այդուհանդերձ, ետպատերազմյան շրջանում Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների արդի դինամիկայում ուրվագծվում են որոշակի հակադիր միտումներ: Եթե Թուրքիան ամեն կերպ փորձում է Ադրբեջանում իր ազդեցությունը դարձնել լիարժեք կյանքի բոլոր ասպարոզներում, այլ խոսքով իրականացնել այդ երկրի թուրքացման քաղաքականություն, ապա Ադրբեջանում ընթանում է դրան տրամագծորեն հակադրվող՝ «ադրբեջանական» էթնիկ ինքնության ձևակերպման և հաստատման գործընթաց, որի մեջ հատկապես թիրախավորված է Հայաստանը:

Հաճախ այլ տարածաշրջաններում ռուս-թուրքական հակասություններն ԱՀ կողմից ՀՀ հանդեպ ուժի կիրառման արտահայտաչաձևով տեղափոխում են Հարավային Կովկաս: Պատահական չէ, որ Թուրքիան և Ադրբեջանը հարաբերություններում կիրառում են հարկադրական դիվանագիտության արատավոր մեթոդները, որոնք չեն կարող երկարատև և կայուն խաղաղության երաշխիք ապահովել ոչ միայն ՀՀ-ի, այլև ամբողջ տարածաշրջանի համար:

Բազմակողմանի վերլուծությունը հստակ խոսում է այն պարզ իրողության օգտին, որ ադրբեջանա-թուրքական տանդեմի կողմից ՀՀ հանդեպ տարվող ռազմատնտեսական քաղաքականությունը պատերազմածին է: Կարճաժամկետ հեռանկարում՝ հատկապես ռուս-ուկրաինական պատերազմի և Կենտրոնական Ասիայում իրավիճակի վատթարացման ֆոնին, ԱՀ ՋՈւ-ն գրեթե անդադար ռեժիմով պատրաստվում է հերթական սադրանքի:

Նախանշվող պատերազմում ՀՀ-ն իրական դաշնակից չի ունենալու և պատերազմի ողջ ծանրությունը կրելու է միայնակ:

Նոր պատերազմից հնարավոր կլինի խուսափել միայն թշնամուն անդադար զիջումների պարագայում միայն, ինչը միանշանակ հանգեցնելու է հայրենագրկմանն ու Հայրենիքի ու Պետականության փաստացի կորստին:

Իրողություններին լրացուցիչ սրություն է հաղորդում նաև Վրաստանի հարավային շրջաններում (*Աճարա, Մառնեուլի, Բոլսնիսի, Դմանիսի, Գարդաբանի ևն*) հիմնականում մահմեդական թուրք-ադրբեջանական տարրերով բնակեցված լինելու հանգամանքը: Միաժամանակ, ինչպես դիպուկ ցույց է տալիս Ս. Մինասյանը, «Թուրքիայի համար Վրաստանը մի

«Վտանգային միջավայրի իմաստավորումը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրողությունների խորապատկերում

կողմից ընկալվում է որպես Հարավային Կովկասում օսմանյան ավանդական աշխարհաքաղաքական ժառանգության մաս, իսկ մյուս կողմից՝ որպես աշխարհագրական և հաղորդակցության կարևորագույն օղակ, որը Թուրքիան կապում է Ադրբեջանի՝ էթնիկական, մշակութային, կրանական լեզվական ինաստով Թուրքիային սահմանների պարագծով ամենամոտ պետության, ինչպես նաև Թուրքիայի տնտեսության և ԵՄ երկրներ արտահանելու համար էներգետիկ ռեսուրսների ամենակարևոր մատակարարի հետ» [Մինասյան Մ., 2004]: Այս ընկալումների կենսակոչումը հավասարապես իրատեսական վտանգներ է պարունակում թե՛ Վրաստանի, թե՛ Հայաստանի հանրապետությունների համար:

Այդ հանգամանքը պարունակում պատմական հեռանկարում հղի է ՀՀ-ն հյուսիսից վերջնականապես շրջափակելու, մատակարարումները խոչընդոտելու կամ արգելափակելու, ինչպես նաև Վրաստանի տարածքային ամբողջականությունը խաթարելու լրջագույն վտանգներով:

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությանը, ապա վերջինս, ի թիվս այլնի, հաշվի առնելով նաև թյուրքական վտանգի առջև նրա տարածքային ամբողջականության խնդիրը, տեսականորեն հանդիսանում է ՀՀ միակ բնական դաշնակիցը, որի հետ ռազմավարական հարաբերությունների զարգացումը, ցավոք, խոչընդոտվում է այլ ուժերի և պետությունների կողմից: Ինչպես այժմ, 30 տարի առաջ էլ, Իրանը հանդես է գալիս որպես գոյություն ունեցող միջազգային սահմանների անխախտելիության կողմնակից: Իրանը ծանրակշիռ չէր համարում պատմական փաստերի վրա հիմնված տարածքային պահանջները: Ըստ իրանական պաշտոնյաների, նման պահանջները ու փաստարկները կհանգեցնեին տարածաշրջանում անվերջանալի հակամարտությունների [Իսկանդարյան Գ., 2024]:

Այնուամենայնիվ, ԻԻՀ-ն շարունակելու է մնալ ՀՀ համար այն միակ և բացառիկ արտաքին ուժը, որը լիակամ է խոչընդոտելու և արգելափակելու Սյունիքի մարզի նկատմամբ թուրքադրբեջանական նկրտումները, քանզի Հայաստանի հետ ընդհանուր սահմանի կորստի դեպքում ԻԻՀ-ն վերջնականապես կպարտվի ԹՀ-ին Հարավային Կովկասի համար աշխարհաքաղաքական ընդդիմամարտում և լրջորեն կվտանգի սեփական տարածքային ամբողջականությունը:

Այսպիսով, բազմաբնագավառ՝ այդ թվում ազգային, կրթագիտական, պաշտպանական, սոցիալական, անվտանգային և այլ գերակա ուղղություններում ներկայիս մարտահրավերների պահպանման ու խորացման, ինչպես նաև ազդեսիվ միջավայրում միակողմանի խաղաղասիրական օրակարգի պահպանումը հղի է անդառնալի վտանգներով Հայոց պետականության համար: Այս մարտահրավերների դիմակայելու և սպառնալիքները չեզոքացնելու համար ՀՀ պատք է վարի չափազնից հավասարակշիռ արտաքին քաղաքականություն՝ պահպանելով ազգային պետական շահի առաջնահերթությունը:

Գրականության ցանկ

Իսկանդարյան Գ., 2024, Հայաստանի և Իրանի մոտեցումները տարածաշրջանային նոր մարտահրավերներին, Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության

փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 406 էջ:

Մելքոնյան Ք., 2024, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում (1991-2023 թթ.), Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 406 էջ:

Մինասյան Ս., 2024, Վրաստանի արտաքին քաղաքականության տարածաշրջանային չափումը, Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 406 էջ:

Մինասյան Ն., 2023, «Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում, Հյակական բանակ, N 3, էջ 23-37:

Տոնոյան Ա., 2024, Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները (1991-2023 թթ.), Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 406 էջ:

Stratejik Derinlik, 2001, Türkiyenin Uluslararası Konumu. Davutoğlu, A. 2001, 582 p.

«Газпром» подписал договор на поставку газа в Азербайджан, <https://www.kommersant.ru/doc/2808733>, (մուտք՝ 02.04.2024).

Россия и Азербайджан обсудили расширение нефтепровода, <https://www.vedomosti.ru/business/articles/2023/10/13/1000381-rossiya-i-azerbaidzhan-obsudili-rasshirenie-nefteprovoda>, (մուտք՝ 02.04.2024).

«Лукойл» закрыл сделку по покупке у Petronas доли в проекте Шах-Дениз, <https://www.vedomosti.ru/business/news/2022/02/18/909948-lukoil-zakril-sdelku-po-pokupke-doli-v-proekte-shah-deniz>, (մուտք՝ 02.04.2024).

Россия и Иран договорились о строительстве железной дороги для развития международного транспортного коридора «Север – Юг», <https://mintrans.gov.ru/press-center/news/10711>), (մուտք՝ 02.04.2024).